



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



**«ՀԻՂՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ**



2023

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՏԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ
ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐՐԵՐԻ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՏԱՎԱԶԱՆՆԵՐՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ
ՍՊԱՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ
ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Գարնանային վարարումները ՀՀ գետերի ջրային ռեժիմի հիմնական փուլերից է, որը ձևավորվում է ձնհալքային, անձրևային և ստորերկրյա ջրերից, այսինքն ունի խառը սնում: Գարնանային վարարումների հոսքի ծավալը, առավելագույն ելքի մեծությունը, սկիզբը և ավարտը, ձևավորման բնույթը պայմանավորված են մթնոլորտային տեղումների քանակով և բնույթով, ջերմային ռեժիմով, ձյան մեջ եղած ջրի պաշարով, ձյան կուտակման և հալքի ընթացքով, ռելիեֆի առանձնահատկություններով և այլն: Գարնանային վարարումների ընթացքում հանրապետության գետերով անցնում է տարեկան հոսքի ընդհանուր ծավալի 30-90%-ը, որի մեծությունը պայմանավորված է առանձին գետերի ջրհավաք ավազանների տեղական գործոնների ազդեցությամբ:

Գարնանային վարարումները գետերի մեծ մասում սկսվում են հիմնականում մարտի երրորդ - ապրիլի առաջին տասնօրյակներում: ՀՀ գետերում տարեկան առավելագույն ելքերը դիտվում են գարնանային վարարումների ընթացքում և հաճախ ափամերձ տարածքների, բնակավայրերի, գյուղատնտեսական հողահանդակների, ենթակառուցվածքների հեղեղման պատճառ դառնում:

Գետերում գարնանային վարարումների բնութագրերը պայմանավորվում են *Նախաձմեռային* (սեպտեմբեր-նոյեմբեր), *ձմեռային* (դեկտեմբեր-մարտ) ամիսների փաստացի և *վարարումների ժամանակաշրջանի* (ապրիլ-հունիս) կանխատեսվող հիդրոոդերևութաբանական պայմանների առանձնահատկություններով:


Ստորև ներկայացվում է 2023 թվականի գարնանային վարարումների հոսքը պայմանավորող հիդրոոդերևութաբանական պայմանների նկարագիրը:

Նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմաններ.


- *սեպտեմբերին* ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի մինչև 50%-ը, Տավուշի, Արագածոտնի և Արմավիրի մարզերում՝ 50-90%-ը, իսկ Լոռու և Շիրակի մարզերում կազմել է նորմայի 90-110%-ը, (նկ.1.ա)
- *հոկտեմբերին* ամսական տեղումների քանակը ամենուր ցածր է եղել նորմայից՝ կազմելով Արագածոտնի, Արմավիրի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում նորմայի 40-60%-ը, իսկ մնացած մարզերում՝ 60-90%-ը, (նկ.1.բ)

- նոյեմբերին նույնպես հանրապետության ողջ տարածքում ամսական տեղումների քանակը ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի 15-80%-ը (նկ.1.գ):
Նախաձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.
- սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին օդի միջին ամսական ջերմաստիճանները ողջ հանրապետությունում բարձր են եղել նորմաներից 1.5-3.0 աստիճանով (նկ.2.ա-գ):

**Նկ. 1. Ամսական տեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի
ա) 2022թ. սեպտեմբեր, բ) 2022թ. հոկտեմբեր գ) 2022թ. նոյեմբեր ամիսներին**



Նկ.1. բ)




Նկ.1. գ)



**Նկ.2. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C)
 ա) 2022թ. սեպտեմբեր, բ) 2022թ. հոկտեմբեր, գ) 2022թ. նոյեմբեր ամիսներին**

Նկ.2.ա)



Նկ.2. բ)



Նկ.2. գ)



Այսպիսով, նախաձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք 2023 թվականի գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմայից բացասական շեղումով ազդեցություն:


Ձմեռային ժամանակաշրջանի հիդրոոդերևութաբանական պայմաններ.

Ձմեռային ժամանակաշրջանում տեղումների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* ամսական տեղումների քանակը շրջանների մեծ մասում կազմել է նորմայի 20-60%-ը, Լոռու մարզում՝ 85%-ը, միայն Տավուշի մարզում բարձր է եղել նորմայից՝ կազմելով 115%, (նկ.3.ա)
- *հունվարին* ողջ հանրապետությունում տեղումների քանակը խիստ ցածր է եղել նորմայից՝ կազմելով ամսական նորմայի 15-35%-ը, (նկ.3.բ)
- *փետրվարին* ամսական տեղումների քանակը Արմավիրի, Արարատի, Սյունիքի մարզերում և Երևանում ցածր է եղել նորմայից՝ կազմելով նորմայի 50-80%-ը, Լոռու, Տավուշի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում կազմել է նորմայի՝ 80-100%-ը, Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում՝ 100-130%-ը, (նկ.3.գ)

- մարտին (մարտի 23-ի դրությամբ) տեղումների քանակը շրջանների մեծ մասում կազմել է նորմայի 60-90%-ը, Շիրակի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզերում կազմել է նորմայի 90-110%-ը, (նկ.3.դ):


**Նկ.3. Ամսական տեղումների քանակը նորմաների համեմատությամբ (%) ըստ մարզերի
 ա) 2022թ. դեկտեմբեր, բ) 2023թ. հունվար գ) 2023թ. փետրվար
 դ) 2023թ. մարտ (մարտի 23-ի դրությամբ) ամիսներին**




Նկ.3. ք)



Նկ.3. գ)



Նկ.3. դ)




Ձմեռային ժամանակահատվածի ջերմաստիճանների բաշխումն ունեցել է հետևյալ պատկերը.


- *դեկտեմբերին* օդի միջին ամսական ջերմաստիճանը Տավուշի, Լոռու և Սյունիքի մարզերում եղել է նորմայի սահմաններում, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի մարզերում և Երևանում բարձր է եղել նորմայից 1.0-3.0 աստիճանով, Ծիրակի, Կոտայքի և Արմավիրի մարզերում բարձր է եղել նորմայից 3.0-4.5 աստիճանով, (նկ.4.ա)
- *հունվարին* օդի միջին ամսական ջերմաստիճանը ամենուր բարձր է եղել նորմայից, Տավուշի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում 0.5-1.5 աստիճանով, իսկ մնացած մարզերում՝ 1.5-3.5 աստիճանով, (նկ.4.բ)
- *փետրվարին*՝ օդի միջին ամսական ջերմաստիճանը շրջանների մեծ մասում եղել է նորմայի սահմաններում, Տավուշի, Արմավիրի, Արարատի մարզերում և Երևանում բարձր է եղել նորմայից 1.0-2.5 աստիճանով, (նկ.4.գ)
- *մարտին (մարտի 23-ի դրությամբ)*՝ ողջ հանրապետությունում օդի միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից. Տավուշի, Արարատի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերում 3.0-5.5 աստիճանով, իսկ մնացած մարզերում 5.5-7.5 աստիճանով (նկ.4.դ):

**Նկ. 4. Օդի միջին ամսական ջերմաստիճանի շեղումը նորմայից (°C)
 ա) 2022թ. դեկտեմբեր, բ) 2023թ. հունվար, գ) 2023թ. փետրվար և
 դ) 2023թ. մարտ (մարտի 23-ի դրությամբ) ամիսներին**


Նկ.4. ա)




Նկ.4. բ)



Նկ.4. գ)



Նկ.4. դ)



Ձմեռային ժամանակաշրջանում դիտված հիդրոոգերությունների և պայմանները 2023 թվականի գարնանային վարարումների հոսքի ձևավորման վրա կունենան նորմայից բացասական շեղումով ազդեցություն:


Ձնածածկույթ

«Ձ գետերի գարնանային վարարումների հոսքի ծավալի և առավելագույն ելքի մեծությունը հիմնականում պայմանավորված է գարնանային վարարումներին նախորդած ժամանակահատվածում կուտակված ձնածածկույթով՝ ձյան մեջ եղած ջրի պաշարով, ինչպես նաև գարնանային վարարումների ժամանակահատվածի ջերմային և խոնավության պայմաններով:


Ձնածածկույթի (ձյան շերտի բարձրության) բաշխվածությունը Հայաստանի տարածքում յուրաքանչյուր ամսվա 25-ի դրությամբ ներկայացված է Նկար 5 (ա - դ)-ում:

2022 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել միայն 2300-2500 մ բարձրություններից վերև (նկ.5.ա): Արագած ք/լ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 34սմ, իսկ դեկտեմբերի երրորդ տասնօրյակի ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունը (32 սմ) կազմել է նորմայի 35%-ը:

Նկ.5.ա) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2022թ. դեկտեմբերի 25




Նկ.5.բ) ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2023թ. հունվարի 25



2023 թվականի հունվարի 25-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկույթ առկա է եղել հիմնականում 1800 մետրից բարձր շրջաններում. Մասրիկ, Հրազդան, Ամբերդ օդերևութաբանական կայաններում ձյան շերտի բարձրությունը կազմել է 2-5սմ, Արագած բ/լ կայանում՝ 28սմ (նկ.5.բ): Առկա ձնածածկի բարձրությունը զգալի ցածր է եղել նորմայից և հունվարի երրորդ տասնօրյակում ձյան շերտի բարձրության միջին տասնօրյակային արժեքները կազմել են նորմաների մինչև 20%-ը, Մասրիկ օդերևութաբանական կայանում՝ 39%-ը, Արագած բ/լ կայանում՝ 26%-ը:


Նկ.5.գ) Ձյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2023թ. փետրվարի 25



2023 թվականի փետրվարի 25-ի դրությամբ մինչև 1800 մ բարձրությունները ձյան շերտի բարձրությունը հիմնականում տատանվել է 1-10 սմ սահմաններում: Փետրվարի 25-ի դրությամբ ձյան շերտի բարձրությունը Գյումրիում կազմել է 8սմ, Ամասիայում՝ 26սմ, Աշոցքում՝ 19սմ, Սևանում՝ 18սմ, Գավառում՝ 3սմ, Հրազդանում՝ 39սմ, Ապարանում՝ 41սմ, Անանուն Էջմուցում՝ 32 սմ, Զերնուկում՝ 46սմ, Ամբերդում՝ 61սմ, Արագած Բ/Լ կայանում՝ 113սմ (նկ.5.գ): Ձյան շերտի փետրվարի երրորդ տասնօրյակի միջին տասնօրյակային բարձրությունները հանրապետության գրեթե ողջ տարածքում ցածր են եղել նորմաներից. ցածրադիր հատվածներում կազմելով նորմայի մինչև 30%-ը,

Գյումրի, Արթիկ, Ամասիա, Մասրիկ, Ջերմուկ օդերևութաբանական կայաններում՝ 40-60%, Սևան, Սեմյոնովկա, Հրազդան, Ապարան, Անանուն Է-ցք, Ամբերդ, Արագած Բ/Լ կայաններում՝ նորմաների 65-90%-ը:

Նկ.5.դ) Ճյան շերտի բարձրության բաշխվածությունը, 2023թ. մարտի 21



2023 թվականի մարտի 21-ի դրությամբ հանրապետության տարածքում ձնածածկ առկա է եղել միայն 2100-2200մ բարձրություններից վերև (նկ.5.դ): Մարտի 21-ի դրությամբ Ամբերդ կայանում ձյան շերտի բարձրությունը կազմել է 10 սմ (2022 թվականի նույն օրը կազմել է 112սմ), Արագած Բ/Լ կայանում՝ 124 սմ (2022 թվականին՝ 227սմ): Մարտի երկրորդ տասնօրյակում ձյան շերտի միջին տասնօրյակային բարձրությունները Ապարան, Սեմյոնովկա, Ջերմուկ, Անանուն Է-ցք, Ամբերդ

օդերևութաբանական կայաններում կազմել են նորմաների 3-35%-ը, Արագած բ/լ կայանում՝ 80%-ը:

Այսպիսով, գերավազաններում կուտակված ձյան պաշարները, կախված վարարումների ժամանակահատվածի օդերևութաբանական պայմաններից, վարարումների ժամանակաշրջանում կձևավորեն նորմայից բացասական շեղումով հոսքի ծավալներ:

Վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմաններ

Ապրիլ, մայիս և հունիս ամիսներին օդի միջին ամսական ջերմաստիճանը կանխատեսվում է նորմայից բարձր 1.0-2.0 աստիճանով, իսկ տեղումների քանակը՝ նորմային մոտ:

Արդյունքում, վարարումների ժամանակաշրջանի կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները վարարումների հոսքի ձևավորման մեջ կունենան նորմային մոտ ազդեցություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

1. Հաշվի առնելով դիտված և կանխատեսվող հիդրոօդերևութաբանական պայմանները, կանխատեսվում է, որ գետերում 2023 թվականի գարնանային վարարումների հոսքի ծավալները և առավելագույն ելքերի մեծությունները սպասվում են նորմաների 50-70%-ի սահմաններում (տես հավելվածը):

2. Առավելագույն ելքերը հիմնականում սպասվում են մայիսի առաջին ու երկրորդ տասնօրյակներում:

3. Ջերմաստիճանի կտրուկ բարձրացման և հորդառատ անձրևների դեպքում գետերի մերձափնյա բնակավայրերի ու ցանքատարածությունների համար հնարավոր են ջրածածկումներ և ողողումներ, որոնց վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր է կազմել միայն 3-4 օր առաջ, երբ հստակ կանխատեսվում են մոտեցող տաք օդային ակիքներ և ինտենսիվ անձրևներ:

4. Սևանա լիճ

Հիմք ընդունելով եղանակի և Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի կանխատեսումները, լճի մակերևույթից գոլորշացման մեծությունները, Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխվելիք ջրի քանակը (170մլն.խոր.մ) և ոռոգման նպատակով լճից օրենքով սահմանված ջրառը՝ 170մլն.խոր.մ (ընդ որում հաշվարկներում, որպես ջրառի սկիզբ ընդունվել է հունիսի երկրորդ տասնօրյակը),

2023 թվականի հուլիսի 1-ին 2023 թվականի ապրիլի 1-ի մակարդակի համեմատ կանխատեսվում է Սևանա լճի մակարդակի բարձրացում 21-26 սմ-ով (1900.52-1900.57մ սահմաններում), իսկ 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ լճի մակարդակը կանխատեսվում է 1900.13-1900.18մ սահմաններում, որը 2023 թվականի հունվարի 1-ի համեմատ ցածր կլինի 10...15սմ-ով (նկ.6):



Նկ.6 Վարարումների ժամանակաշրջանում և տարվա ընթացքում Սևանա լճի մակարդակի փոփոխությունը 2012-2022թթ. ընթացքում, և 2023 թվականի համար կանխատեսումը

5. Ջրամբարներ

«ՀՄԿ» ՊՈԱԿ-ի կողմից դիտարկվող 5 խոշոր ջրամբարների 2023 թվականի առավելագույն ջրալցվածությունը կանխատեսվում է.

- ✓ Ախուրյանի ջրամբարում՝ 65-70% (340-368 մլն.մ³),
- ✓ Արփիլիճ ջրամբարում՝ 65-70% (68.5-73.5 մլն.մ³),
- ✓ Ապարանի ջրամբարում՝ 45-50% (41.0-45.5 մլն.մ³),
- ✓ Ազատի ջրամբարում՝ 75-80% (52.5-56.0 մլն.մ³),
- ✓ Մարմարիկի ջրամբարում՝ 75-80% (18.0-19.2 մլն.մ³):

Ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ կանխատեսումները կազմելիս հնարավորինս հաշվի են առնվել գարնանային վարարումների հոսքը ձևավորող գործոնները, և բացի այդ օգտագործվել են կանխատեսված մեծություններ, որոնք ըստ անհրաժեշտության պարբերաբար ենթակա են ճշգրտման, հետևաբար նման դեպքերում կճշգրտվեն նաև թողարկված կանխատեսումները և կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի
կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն



ԼԵՎՈՆ ԱԶԻՋՅԱՆ

28.03.2023թ.

2023Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԻՇՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

№	ԳԵՏ, ԼԻՃ, ՋՐԱՄԲԱՐ	ԴԻՏԱԿԵՏ	ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ	ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԽԱԼԸ	ԲԱԶՄԱՄՅԱ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ		
					ՆՎԱԶ.	ՄԻՋԻՆ	ԱՌԱՎ.
1	2	3	4	5	6	7	8
Գարնանային վարարումների հոսքի ծավալները. (01.04-30.06) մլն խոր.մ							
1	Փամբակ	Շիրակամուր	26.0	11.4	7.52	44.5	87.4
2	Փամբակ	Վանաձոր	65.0	23.5	44.9	102	209
3	Փամբակ	Մեղրուր	91.0	28.8	52.8	146	275
4	Փամբակ	Թումանյան	110	35.8	64.9	190	313
5	Դեբեդ	Թումանյան	280	98.6	169	449	731
6	Դեբեդ	Ախթալա	310	111	204	532	854
7	Դեբեդ	Այրում	325	118	178	573	947
8	Լեռնաջուր	Լեռնապատ	17.0	6.17	11.4	27.0	55.4
9	Տանձուր	Վանաձոր	27.0	9.60	11.0	42.3	77.6
10	Այարեքս	Դեբեդ	20.0	5.85	10.6	30.6	58.6
11	Ձորագետ	Կաթնառատ	33.0	7.65	27.3	47.4	72.7
12	Ձորագետ	Սյրեփանավան	115	35.0	71.8	195	324
13	Ձորագետ	Գարգառ	155	44.6	87.3	245	438
14	Տաշիր	Սարապուղկա	30.0	13.1	14.7	46.9	91.0
15	Գարգառ	Կուրթան	13.0	5.29	4.61	23.1	42.4
16	Մարցիհետ	Թումանյան	27.0	10.5	10.3	46.6	98.9
17	Աղսուկ	Ֆիդիկոմ	14.0	4.26	6.98	21.1	50.5
18	Աղսուկ	Դիլիջան	35.0	13.6	16.2	56.4	148
19	Աղսուկ	Իջևան	107	44.6	44.2	183	405
20	Բլրանգետ	Դիլիջան	10.0	3.53	3.74	15.1	26.0
21	Շամլուղ	Դիլիջան	6.00	2.64	3.09	9.22	22.6
22	Գեղիկ	Գոշ	33.0	17.1	14.4	70.1	157
23	Գեղիկ	Ճամբարակ	7.00	4.03	3.47	15.7	30.6
24	Պաղջուր	Գեղահովիտ	15.0	9.90	3.42	33.3	60.9
25	Ոսկեպար	Ոսկեպար	11.0	8.46	2.70	22.6	55.4
26	Կիրանց	Աճարկուր	9.00	5.24	1.40	18.5	36.7
27	Հախում	Ծաղկավան	13.0	6.27	4.89	26.7	45.2
28	Տավուշ	Բերդ	6.00	5.08	1.55	13.3	34.2
29	Հախինջա	Այգեձոր	25.0	15.1	9.40	55.0	104
30	Նայրիզետ	Գանձաքար	6.00	3.46	2.27	12.0	23.5
31	Ախուրյան	Ամասիա	50.0	25.5	35.3	89.6	193
32	Ախուրյան	Ախուրիկ	55.0	23.4	40.1	91.0	181
33	Ձորագետ	Ձորակերպ	3.00	1.41	1.75	5.68	16.3
34	Աշոցք	Կրասար	23.0	6.36	23.6	42.9	70.1
35	Կարկաչան	Ղարիբջանյան	5.00	3.56	3.38	12.1	23.6
36	Քասախ	Վարդենիս	12.0	11.2	5.68	25.8	66.8
37	Քասախ	Աշտարակ	21.0	12.4	11.5	37.4	106
38	Թթուջուր	Թթուջուր	9.00	5.74	3.10	17.9	32.1
39	Եղիպատրուշ	Եղիպատրուշ	2.30	1.17	1.45	4.04	9.50
40*	Գեղարուր	Արագած	11.0	4.18	6.70	22.3	36.2
41	Շաղվարդ	Փարբի	3.30	1.50	2.55	5.60	14.2
42	Ամբերդ	Ագարակ	5.00	4.00	0.30	8.78	29.6
43	Հրազդան	Հրազդան	100	37.1	57.0	166	320
44	Հրազդան	Արգել	31.0	16.0	27.1	54.6	108
45	Հրազդան	Երևան	70.0	42.0	27.0	116	234
46	Մարմարիկ	Հանքավան	19.0	8.80	9.53	39.1	68.6
47	Մարմարիկ	Աղավնաձոր	70.0	27.3	34.0	114	284
48	Ծաղկամարգ	Արտավազ	13.0	4.68	7.44	21.0	36.2
49	Գոմուր	Մեղրաձոր	23.0	11.6	10.9	39.6	97.6
50	Դայար	Արգաքան	9.00	6.00	5.42	19.3	44.5
51	Արաիզետ	Արագյուղ	3.00	4.45	1.00	7.60	32.5
52	Ագար	Գառնի	57.0	16.0	36.3	77.2	155

1	2	3	4	5	6	7	8
53	Վեղի	Ուրցածոր	17.0	10.8	12.8	40.4	76.0
54	Արփա	Ջերմուկ	55.0	16.4	46.2	97.4	166
55	Արփա	Եղեգնածոր	75.0	51.7	27.0	145	352
56	Արփա	Արենի	150	90.2	51.0	250	612
57	Վալք	Ջառիթափ	5.00	2.87	1.96	10.0	21.3
58	Գյածոր	Վերնաշեն	1.70	1.18	0.35	3.32	8.97
59	Եղեգիս	Հերմոն	55.0	20.6	19.0	78.9	178
60	Եղեգիս	Շարին	80.0	36.2	34.4	118	255
61	Արտաբուն	Արտաբույնք	7.30	4.11	3.93	15.3	29.9
62	Սելիմագետ	Շարին	15.0	10.9	5.84	33.4	86.2
63**	Մեղրիգետ	Լիճք	9.00	2.58	8.10	15.5	25.5
64	Մեղրիգետ	Մեղրի	35.0	19.1	18.3	56.5	115
65	Ողջի	Քաջարան	37.0	10.1	27.9	62.3	102
66	Ողջի	Կապան	110	44.4	41.0	196	384
67	Որոտան	Գորայք	67.0	15.3	28.9	63.7	113
68	Ծղուկ	Ծղուկ	23.0	11.4	15.8	36.7	88.4
69	Գորիագետ	Գորիս	2.50	2.00	1.99	4.69	12.4
70	Գեղի	Գեղի	45.0	15.1	35.9	80.9	134

* փրված է ապրիլ-օգոստոս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

** փրված է ապրիլ-հուլիս ամիսների հոսքի կանխապեստումը և բնույթագրերը

Սևանա լիճ թափվող գետեր							
71	Ձկնագետ	Ծովագյուղ	13.0	6.67	8.10	26.2	54.3
72	Դրախտիկ	Դրախտիկ	2.50	1.35	0.32	4.05	8.72
73	Փամբակ	Փամբակ	2.00	1.20	1.29	3.84	10.1
74	Մասրիկ	Ծովակ	20.0	6.31	17.8	37.2	70.9
75	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	5.00	2.88	2.81	11.0	23.2
76	Արծվանիստ	Արծվանիստ	3.50	2.63	1.20	5.70	18.0
77	Վարդենիս	Վարդենիկ	21.0	7.03	17.9	33.6	55.4
78	Մարտունի	Գեղհովիտ	19.0	7.31	16.3	32.4	64.5
79	Արգիճի	Վերին Գեղաշեն	83.0	27.3	54.3	122	291
80	Ծաղկաշեն	Վաղաշեն	21.0	5.66	15.7	31.6	48.4
81	Բախտրակ	Ծակքար	11.0	4.81	1.16	16.2	32.9
82	Շողվակ	Ձորագյուղ	4.50	2.70	3.35	9.23	19.9
83	Գավառագետ	Նորապոս	27.0	6.00	25.0	41.8	73.0

Առավելագույն ելքերի մեծությունները. մ ³ /վրկ							
1	Փամբակ	Շիրակամուտ	11.0	5.90	5.50	19.5	45.6
2	Փամբակ	Վանածոր	17.0	10.2	13.2	33.8	83.5
3	Փամբակ	Մեղրուտ	28.0	14.0	16.2	52.9	109
4	Փամբակ	Թումանյան	41.0	21.6	25.6	79.1	171
5	Դեբեդ	Թումանյան	130	51.3	66.0	203	477
6	Դեբեդ	Ախթալա	170	55.2	71.5	257	760
7	Դեբեդ	Այրում	200	80.0	50.6	245	759
8	Լեռնաջուր	Լեռնապատ	6.00	2.52	3.90	9.90	24.3
9	Տանձուտ	Վանածոր	10.0	5.02	3.20	19.3	65.6
10	Ալարեքս	Դեբեդ	12.0	11.5	2.30	21.1	80.9
11	Ձորագետ	Կաթնառատ	15.0	6.63	9.60	22.3	52.4
12	Ձորագետ	Սյրեփանավան	65.0	31.0	32.7	92.9	249
13	Ձորագետ	Գարգառ	90.0	43.7	23.1	125	359
14	Տաշիր	Սարապովկա	23.0	18.0	4.70	33.0	122
15	Գարգառ	Կուրթան	9.00	7.77	3.90	13.9	76.0
16	Մարցիգետ	Թումանյան	20.0	10.4	4.30	30.3	93.0
17	Աղստև	Ֆիդլերովո	7.00	3.90	1.60	9.50	26.1
18	Աղստև	Դիլիջան	17.0	6.59	4.90	24.4	53.1
19	Աղստև	Իջևան	60.0	21.2	16.6	75.6	182
20	Բլլղանագետ	Դիլիջան	5.00	2.40	1.48	8.14	16.2
21	Շամլուղ	Դիլիջան	3.00	1.30	0.98	4.31	10.5
22	Գեղիկ	Գոշ	17.0	12.0	5.20	35.9	74.5
23	Գեղիկ	Ճամբարակ	6.50	4.25	2.10	10.4	32.4

1	2	3	4	5	6	7	8
24	Պաղտուր	Գեղահովիտ	15.0	11.1	1.50	29.9	83.8
25	Ոսկեպար	Ոսկեպար	12.0	7.30	1.80	19.7	45.8
26	Կիրանց	Աճարկուտ	8.00	3.85	1.50	10.9	29.1
27	Հախում	Ծաղկավան	9.00	5.81	2.90	16.6	44.3
28	Տավուշ	Քերդ	6.00	5.56	1.60	11.2	35.4
29	Հախինջա	Այգեձոր	25.0	13.1	3.10	38.4	89.0
30	Նալրիգետ	Գանձաքար	5.00	3.67	1.10	7.50	24.8
31	Ախուրյան	Ամասիա	20.0	7.99	11.0	30.4	58.0
32	Ախուրյան	Ախուրիկ	30.0	21.9	15.8	60.7	182
33	Քասախ	Վարդենիս	10.0	16.6	2.90	23.2	151
34	Քասախ	Աշտարակ	25.0	19.0	7.20	50.6	130
35	Հրազդան	Հրազդան	35.0	20.6	16.5	62.8	144
36	Հրազդան	Արգել	13.0	11.0	5.60	27.7	82.1
37	Հրազդան	Երևան	29.0	30.4	22.0	59.0	174
38	Մարմարիկ	Հանքավան	11.0	3.88	3.40	16.5	33.4
39	Մարմարիկ	Աղավնաձոր	25.0	12.4	10.0	40.0	86.7
40	Գոմուր	Մեղրաձոր	5.00	5.40	2.40	15.4	50.6
41	Ազար	Գառնի	20.0	11.2	11.8	32.5	83.9
42	Վեդի	Ուրցաձոր	8.00	5.91	5.50	17.0	45.9
43	Արփա	Ջերմուկ	17.0	11.2	18.4	49.4	91.0
44	Արփա	Եղեգնաձոր	43.0	21.0	26.5	65.6	119
45	Արփա	Արենի	55.0	37.0	31.6	111	199
46	Եղեգիս	Հերմոն	17.0	7.40	10.1	27.5	48.6
47	Եղեգիս	Շապին	27.0	14.7	17.8	47.6	207
48	Արփարուն	Արփարույնք	4.00	2.00	1.28	6.14	16.9
49	Սելիմազետ	Շապին	9.00	7.58	1.60	15.9	72.4
50	Մեղրիգետ	Լիճք	2.50	0.81	1.61	4.14	7.35
51	Մեղրիգետ	Մեղրի	11.0	8.33	5.40	17.5	87.5
52	Ողջի	Քաջարան	12.0	4.22	8.70	18.3	43.9
53	Ողջի	Կապան	35.0	15.4	11.4	55.9	133
54	Ծղուկ	Ծղուկ	7.00	6.12	5.50	15.0	39.0
55	Գեղի	Գեղի	13.0	5.47	9.00	24.0	44.0

Սևանա լիճ թափվող գետեր							
56	Ձկնազետ	Ծովագյուղ	11.0	4.27	3.38	14.0	46.4
57	Դրախտիկ	Դրախտիկ	2.00	1.00	0.32	4.05	6.11
58	Փամբակ	Փամբակ	1.00	0.70	0.40	1.53	6.53
59	Մասրիկ	Ծովակ	6.00	2.80	2.91	9.73	21.5
60	Կարճաղբյուր	Կարճաղբյուր	2.00	0.90	0.55	2.80	15.4
61	Արծվանիստ	Արծվանիստ	2.30	1.00	0.86	3.12	15.3
62	Վարդենիս	Վարդենիկ	8.00	3.64	2.42	13.2	30.6
63	Մարտունի	Գեղհովիտ	8.00	3.43	5.80	13.6	26.7
64	Արգիճի	Վերին Գեղաշեն	27.0	25.3	16.3	50.7	265
65	Ծաղկաշեն	Վաղաշեն	6.30	2.16	4.70	9.98	17.9
66	Բախտակ	Ծակքար	7.00	3.91	0.26	12.1	31.5
67	Շողվակ	Ձորագյուղ	3.00	1.50	1.22	4.86	18.2
68	Գավառազետ	Նորաբոս	11.0	6.52	5.64	16.6	72.5

Վեգետացիոն ժամանակաշրջանի (01.04-30.09) միջին ելքերի մեծությունների կանխատեսում, մ³/կրկ

1	2	3	4	5	6	7	8
1	Փամբակ	Շիրակամուր	2.00	0.88	1.54	3.42	6.86
2	Փամբակ	Վանաձոր	5.00	1.78	4.38	8.19	16.0
3	Փամբակ	Մեղրուր	7.50	2.19	4.43	11.7	20.8
4	Փամբակ	Թումանյան	8.50	1.92	5.80	16.1	27.0
5	Դեբեդ	Ախթալա	27.0	9.30	20.7	45.6	80.4
6	Դեբեդ	Այրում	30.0	10.4	17.7	47.9	92.2
7	Լեռնաջուր	Լեռնապար	1.30	0.40	0.98	2.17	5.27
8	Այարեքս	Դեբեդ	1.70	0.60	1.16	2.60	5.47
9	Ձորագետ	Կաթնառապ	2.70	0.70	2.51	4.20	7.02
10	Ձորագետ	Սյրեփանավան	10.0	3.00	7.10	17.0	30.3
11	Ձորագետ	Գարգառ	15.0	4.36	8.90	21.8	38.4
12	Տաշիր	Սարապովկա	2.80	1.10	1.57	4.09	9.10
13	Գարգառ	Կուրթան	1.00	0.43	0.70	1.91	3.69
14	Մարցիգետ	Թումանյան	2.50	0.97	1.03	3.95	7.25
15	Աղսրև	Ֆիոլեպովո	1.10	0.38	0.72	1.81	3.68
16	Աղսրև	Դիլիջան	3.00	1.09	1.41	4.67	10.9
17	Աղսրև	Իջևան	8.50	3.40	3.70	14.7	34.0
18	Գեյրիկ	Գոշ	2.50	1.38	1.20	5.53	13.2
19	Պաղցուր	Գեյրահովիտ	0.90	0.86	0.40	2.96	6.12
20	Ոսկեպար	Ոսկեպար	0.80	0.61	0.31	1.81	4.86
21	Կիրանց	Աճարկուր	0.60	0.46	0.14	1.56	2.99
22	Հախում	Ծաղկավան	1.30	0.57	0.49	2.20	4.71
23	Տավուշ	Բերդ	0.30	0.48	0.16	1.08	3.88
24	Հախիհնջա	Այգեձոր	2.00	1.28	0.84	4.53	10.2
25	Ախուրյան	Ախուրիկ	4.00	2.02	4.50	8.50	16.5
26	Քասախ	Վարդենիս	0.90	0.82	0.41	1.89	4.86
27	Քասախ	Աշտարակ	2.30	1.27	1.40	4.00	11.1
28	Հրազդան	Հրազդան	7.30	2.65	5.31	12.1	23.2
29	Հրազդան	Արգել	3.50	1.02	3.08	5.09	8.81
30	Մարմարիկ	Հանքավան	1.65	0.56	0.93	2.90	5.35
31	Մարմարիկ	Աղավնաձոր	4.50	2.27	4.20	8.19	19.5
32	Դալար	Արգաքան	0.70	0.43	0.38	1.39	3.55
33	Ագապ	Գառնի	3.50	1.30	2.99	6.43	10.8
34	Վեդի	Ուրցաձոր	1.10	0.75	0.38	2.38	5.43
35	Արփա	Ջերմուկ	4.60	1.25	3.90	8.03	13.5
36	Արփա	Եղեգնաձոր	8.00	3.65	2.69	14.7	36.0
37	Արփա	Արենի	12.0	5.71	4.07	20.3	42.9
38	Վայք	Ջառիթափ	0.30	0.19	0.15	0.68	1.46
39	Գյաձոր	Վերնաշեն	0.10	0.088	0.033	0.22	0.63
40	Եղեգիս	Հերմոն	4.50	1.51	2.10	6.43	13.0
41	Եղեգիս	Շապին	6.50	2.63	2.90	10.7	19.6
42	Արփարուն	Արփարույնք	0.50	0.32	0.32	1.19	2.47
43	Սելիմագետ	Շապին	1.00	0.70	0.47	2.41	5.79
44	Մեղրիգետ	Լիճք	0.70	0.19	0.53	1.11	1.76
45	Մեղրիգետ	Մեղրի	2.70	1.21	1.39	4.64	9.58
46	Ողջի	Քաջարան	3.00	1.16	2.20	5.90	9.08
47	Ողջի	Կապան	11.0	3.84	3.17	18.4	32.1
48	Գեղի	Գեղի	4.00	1.59	3.16	7.18	10.8
49	Որոտան	Գորայք	3.30	0.99	2.93	5.60	9.06
50	Ծղուկ	Ծղուկ	1.20	0.79	1.03	2.28	4.74
Սևանա լիճ թափվող գետեր							
51	Ձկնագետ	Ծովագյուղ	0.90	0.60	0.60	1.83	3.70
52	Դրախտիկ	Դրախտիկ	0.15	0.10	0.030	0.29	0.61
53	Փամբակ	Փամբակ	0.20	0.14	0.12	0.33	0.73
54	Մասրիկ	Ծովակ	2.50	0.48	2.12	3.74	5.99

1	2	3	4	5	6	7	8
55	Կարճադրյուր	Կարճադրյուր	0.70	0.22	0.41	1.07	1.99
56	Արծվանիսպ	Արծվանիսպ	0.20	0.17	0.10	0.41	1.24
57	Վարդենիս	Վարդենիկ	1.70	0.60	0.61	2.47	5.20
58	Մարտունի	Գեղիովիպ	1.50	0.65	1.29	2.67	5.58
59	Արգիճի	Վերին Գեղաշեն	5.00	1.89	4.10	8.56	19.9
60	Ծաղկաշեն	Վաղաշեն	1.60	0.44	1.10	2.32	3.54
61	Բախտակ	Ծակքար	0.50	0.33	0.12	1.09	2.24
62	Շողվակ	Ձորագյուղ	0.40	0.18	0.25	0.66	1.32
63	Գավառագետ	Նորապուս	2.70	0.48	2.95	3.94	6.61

ՋՐԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՋՐԱՄԲԱՐՆԵՐ ԵՎ ԼՃԵՐ՝ ԳԵՏԵՐՈՎ

1	2	3	4	5	6	7	8
(01.04-30.06) մլն. խոր.մ							
1	Սևանա լիճ		280	68.2	209	410	676
2	Արփի լճի ջրմբ.		25.0	9.57	32.6	63.0	109
3	Ախուրյանի ջրմբ.		250	118	191	492	971
4	Ապարանի ջրմբ.		25.0	16.0	25.0	57.0	133
5	Ազապի ջրմբ.		26.0	18.4	36.9	87.0	161
6	Կեչուպի ջրմբ		90.0	25.2	73.5	149	258
7	Սպանդարյանի ջրմբ.		90.0	25.0	60.0	130	210
8	Ջողագի ջրմբ.		50.0	24.7	7.70	77.8	157
9	Գեղիի ջրմբ.		52.0	23.9	51.7	119	227
10	Հախումի ջրմբ		18.0	7.85	6.12	32.6	56.5
11	Տավուշի ջրմբ		9.00	5.46	1.71	13.7	37.5

(01.04-30.09) մ³/վրկ							
1	Սևանա լիճ		23.5	5.10	18.3	34.0	54.2
2	Ախուրյանի ջրմբ.		23.0	8.56	17.4	39.8	78.0
3	Ապարանի ջրմբ.		2.00	1.18	1.35	4.44	8.18

Տնօրենի տեղակալ՝



Էդգար Միսակյան

Հիդրոլոգիայի ծառայության պետ՝



Ամալյա Միսակյան

Հիդրոլոգիական կանխատեսումների բաժնի պետ՝



Լուսինե Շաքարյան

Թողարկվել է 28.03.2023թ.